ցաւ պցելել յայտնի բարեգործ մեծ. պ. Աղէքսանդր Յ. Մանթաշեանցին, ուր հիւրասիրուեցաւ թէյով։

Պ. Ա. Մանթաշեանն այդ միջոցին յայտնեց Նորին Օծութեան, որ ինքը յանձն է առնում նորոգել ս. Էջմիածնի նուիրական Տաճարը, ծախսելով նորա վերայ հարիւր յիսուն հազար ռուբլի և արժանացաւ Աղդիս սրբազնագոյն Հովուապետի հայրական լիաբերան օրհնութեան։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ։

Աղդիս Վ.Եկ. Հայրապետը կոնդակով մի մեծայուն յանձնաժողով է նշանակել ս. Էջմիածնում, որին յանձնուած է տպարանի կառավարութիւնը, «Արարատի» խմբագրութիւնը, մատենադարանի ու թանգարանի կառավարութիւնն ու բարեկարգութիւնը և հոգևոր դրքերի դրաքննութեան գործը։

Յանձնաժողովի նախագահն է Տ. Աշոտ վարդ. Հախեանը, որ և դրաքննիչ հոգևոր դրոց, իսկ անդամներն են՝ Տ. Տ. Կարապետ, Մեսրովպ, Յուսիկ և Մամբրէ վարդապետներ և դրպիր Սպիրիդոն։

Յանձնաժողովը մշտական է և մէկի որ և է պատճառով բացակայելու կամ պակասելու դէպքում՝ լրացնում է Վ.Եկ. Հայրապետի կողմից։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԷՆՔԸ

Ներսիսեան Դպրոցի արդի հոգաբարձութիւնը անցեալ Մարտ ամսին որոշել էր դպրոցի շէնքը կառուցանել Վանքի եկեղեցու հանդէպ գտնուած վանքապատկան ընդարձակ հրապարակի վրայ, որ ի Տ. հանգուցեալ Մատթէոս կաթուղիկոսը նուիրել էր Ներսիսեան Դպրոցին յատկապէս վրէն ուսումնարան կառուցանելու նպատակով։ Այժմեան հոգաբարձութիւնը շատ տեղեր որոնելուց յետոյ չգտաւ յարմարաւոր մի այլ դեռ տին և որոշեց դարձեալ այդտեղը նախընտրել։ Իւր այս որոշումը հոգաբարձութիւնը մի տեղեկագրով ներկայացրեց Վեհափառին և խնդրեց օրհնել այդ ձեռնարկութիւնը։

Նորին Ս. Օծութիւնը առ այժմ չհաճեցաւ թոյլատրել շէնքի կառուցումը, այլ մի կոնդակով առաջարկեց հոգաբարձութեան նախագահ Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանին հրաւիրել Թիֆլիսի քաղաքացիներից պ. պ. Ադ. Մանթաշեանին, Յ. Ալիխանեանին, ինժ. Ա. Բաբեանին, Գ. Դաւթեանին, բժ. Ա. Բաբայեանին, Պ. Քալանթարեանին և բժ. Կիրակոսեանին, որոնք հոգաբարձութեան հետ միասին խորհրդակ-